



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

Q-35



801.542-3

12 MAR 2017

2-35

պյ.

Հ Ա Ի Ա Խ Ե Յ Ի

Կ Բ Ա Կ Ը

3573

(Արտատպած «Մշակից»)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանեանցի.

1903

51871

23 JUL 2013
HES KAM ST

Дозволено Цензурою. 18 Апрелья 1903 г. Тифлисеъ.

«Հայի գութան, հայի գութան, որի
համար կը ջանաս,
Ո՛վ բեզիմով կը տանջուի, որին գու
կուշտ հաց կուտաս...»

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

Կ Ր Ա Կ Ը ...

— Ի՞նչ էնհնր, նազլո՛ւ, հալղ-օլան (բո-
ւորը) ցանքսը պրծան, մեր արտերը սև
մնաց, սերմի ճար չեղաւ...

— Նսսիմ (ես ի՞նչ գիտեմ), Գալօ ջան,
սերմը կըսես, բընաղսնէն (ուտելիք) հէշ
խապար չես, մէ եփելում ա ալուր եա ըլլի
եա չըլլի...:

— Սխշի՛, ալուրն ա՛ պարպել է... (վեր-
ջացել է):

Պարպել է...

Գալօն լռեց: Նազլուի հաղորդած սոս-
կալի լուրը նրա լեզուն փակեց: «Մէ եփե-
լում ալուր չը կայ...»: Մի շարաթ էր խեղճ
Գալօն դռնէ դուռ ընկած «սերմի ճար» չէր
կարողանում անել, այժմ դրա վրա աւելա-
ցաւ և ուտելիքի՛ մի կտոր չոր հացի հոգ-

սը... Ո՛ւմ դիմէր, ումնից ուզէր... ո՞վ ա-
ռանց փող մի բուռ հաց կը սեցնէր Գալօի
պէս աղքատ, անճար գիւղացուն, որի ութն
անդամ գերդաստանը մի զոյգ եզան պոչին
էր նայում... Դեռ այդ եզները պիտի վճա-
րէին և Գալօի հայրական անսպառ ժառան-
գութիւն՝ երկու հարիւր մանէթ պարտքն իբ
հսկայական, վիթխարի տոկոսներով: Անտէր
մնար այդ պարտքը, որ ոչ վերջ ունէր, ոչ
վախճան: Տասնուվեց տարուան սև պատ-
մագրութիւն ունէր այդ անտէրը: Գալօին
կարգելու (պսակելու) ժամանակ նրա հայրը
յիսուն ըուրլի էր վերցրել պարտք Մարտի-
րոս աղայից ու թէև տարէց տարի ինքն
էլ, հայրն էլ տալիս էին տոկոսը, բայց
դարձեալ գիւղի գլխաւորի «հաշու» դարձել
էր երկու հարիւր մանէթ: Երկու հարիւր
մանէթ պարտքի տակ տքացող գիւղացուն
էլ ո՞վ բան կը հաւատար...: Մինչդեռ Գա-
լօին 50—60 մանէթ էր պէտք 2—3 սօմառ
ցանելիքի՝ սերմի համար, մի այդքան էլ
ուտելիքի, մինչև նորի հասնելը: Անխուսա-
փելի կարիքը Գալօին էլ կնոջն էլ լեզուն
կապ էր ձգել: Լուռ էին, բայց երկուսն էլ
անբուն, աչքերը բաց: «Երկու օրուան ա-

լիւր չը կար... էլ ո՛ւմ քունը կը տանէր...
—Գալօ, դորթ (ճիշտ) Սնիկին հախը
(վարձը) չէր տայ Մարտիրոս աղան, սօմա-
ռըմ գարի առնէիր, տէօր (մինչև) աչէինք
Ս.ստուած ի՛նչ կուտար...:

—Ի՛նչ հախ, աղչի, է՛ն շատունց փարին
շահին (տոկոս) է հաշուել, հըլը (դեռ) օրը
տասը հեղ (անգամ) ա մնացած շահը կուզէ,
թէ չէ եզներդ ու արտերտ սիւղով կառնեմ,
կըսէ...: հիմի փարա կոտայ մեզի...: Երեկ
նայտա (հազիւ) դուռ ու դրկից վրա եզան,
էսքանմ ըսաւ, թէ թո՛ղ արտերն ինձի տայ,
ինքն ա գայ փարին շահին տեղը «մարա-
բայ» *) ըլլի, ուտելիքը տամ, գլխէն ա
(դրամապլիսից) բանըմ իջնիմ (պակասեց-
նեմ)...:

Դարձեալ լուռ են. խոլ խաւարն է
միայն կամաց փսփսում ու գիշերուան գով
գեփիւռը դուրսն ամուր շնկչնկում: Ժամերն
անցան մէկը միւսի յետևից. աքաղաղը իբ
առաջի կանչը կանչեց, բայց խեղճ Գալօն
նազուրի հետ դեռ անքուն են: Անկողինը
կարծես փշով էր լցվել: «Մարաբայի» գէշ

*) «Մարաբայ»՝ ամբողջ ընտանիքով ծառայ:

անունը, փուշ անունը իմացողի էլ քունը
երբ կը տանի...:

Աշունը էր: Գարու, ցորնի կարմիր-դե-
ղին արտերը կամ քաղվել են եղըն (դէղ)
եղել, կամ թէ փռվել, գետին կպել, պա-
տերագմի դաշտ դարձել: Հասած հացի լիք
հասկեորը պոկպրկած, արիւնլուայ դիերի
պէս ջարդ ու փշուր վէր են թափած: Գաշ-
տը կարծես արիւն արցունք էր լալիս. մեծ
հեղեղի սեւակոսներ, խիստ սգւորի դառն
արցունքի հետքերի պէս, լերան լանջով
փռվել են ցած...:

Գէշ տարի էր, շատ գէշ տարի այդ տա-
րին...: Քաղի կիսին կարկուտն եկաւ ցանք-
սի կէսը սրբեց տարաւ, խեղճ գիւղացու
մէջքը կոտրեց, տունն ու տեղը աւրեց...:
էլ ձիւնն եկաւ էն գիւղացու խեղճ գլխին,
ով օր առաջ կանաչ-մանաչ հնձել պըրծել
չէր արտը:

Ամպ ու գամբ մի օր էր: Առաւօտից
մանր անձրեղ մայիսուայ պէս մաղում էր:
Դուրսն անձրե էր, թօն ու թօնջանք, ցեխ
ու ճխանք, մարդ չէր ուզում դրսի երեսը
տեսնել, Իրիկնաղէմ օրնի մեծ-մեծ սայլերը

ճրուրլթիով, զըռըլթիով շարան-շուրան մտան
գիւղ: Հինգ սայլ մէկից թափում էին Մար-
տիրոս աղի մեծ կալը: Նրանցից մէկն էլ
Գալօն էր: Մի ժամուայ մէջ դիզվեց «թա-
յան»՝ գարու ահագին դէզը: Խիստ կարկու-
տը թարսի նման այդ անգամին գիւղի այն
կողմը չէր զարկել, ուր Գալօի արտերն
էին...: Անտէր կարկուտ, ցուրտ ու եղեամ,
ցաւ ու փորձանք կարծես աղքատ, խեղճ
անձարի, թոյլ անզօրի համար են միշտ...
և Աստուածն էլ միշտ հարուստի, ուժովի
կողմն է պահում: Քանի Գալօն դէսից-դէնից
«փոխ» վերցրած, պարտքով գնած սերմով
ցանում էր արտերն իր համար կամ կար-
կուտն էր դալիս խփում, կամ երաշտը այ-
րում, խանձում, կամ եղեամը սրբում տա-
նում, սառեցնում, մուկը կտրում, ճիճուն
ուտում...: Իսկ այդ տարին, որ «գանակը
ոսկրին հասած»՝ ճարը կտրած Մարտիրոս
աղին «մարաբայ» էր եղել ու այդ տարին
նրա համար հերկել, ցանել, նրա արտերին
ոչ մուկ-մժեղ, եղեամ, կարկուտ, երաշտ
կամ ցուրտ, ոչ էլ ճիճու մօտեցաւ. կար-
ծես դրանք էլ մարդկանց նման վախում,
դողում էին հարուստ մարդից՝ Մարտիրոս

աղից... Եւ խեղճ Գալօն սրտի ցաւով մումուռով քսան սայլ գարի, բըրնձի պէս հատ-հատ ջոկած մաքուր գարի քաղեց, ժողվեց իր «քիւլֆաթի» տղերանց հետ իր եզներով կրեց, բերեց ու հին պարտքի տոկոսի տեղ դիզեց աղա Մարտիրոսի մեծ կալը, որ յետոյ էլ կալսէ. լցնէ նոյն աղայի ամբարը: Եւ այս բոլոր արիւն-քրտինք վաստակի վարձ Գալօն պիտի ստանար լոկ մի կտոր հաց, չոր ու ցամաք գարու հաց: Այսպէս է մեր դիւղերում «մարաբայի» ու աղայի «օրէնքը», երբ «մարաբան» մուրհակով պարտք ունի հարուստ աղային...:

Անձրեն արդէն դադարել էր, բայց զիլ քամին բոլոր ուժով դեռ փչում էր: Մութ գիշեր էր, երբ որ Գալօն տուն եկաւ: Զաբաթով կրակի երես չը տեսած թոնրի շուրջը տղայքն առել ծուարել (կուշ եկել) էր նազլուն:

— Ել բըթուճըմ (մի պատառ) հաց բեր, նազլու, էսչաղըս (էս ժամանակ) ինչի էք նստել...:

— Հաց բեր... կայ որ բերեմ. Գալօ ջան, դարդակ փորով քնիլ կըլլի...:

— Աղչի, էդ անաստուածներն էլի ալուր չեն տուել...:

— Հացը թանգ է, կըսէ աղան, քիչըմ հատարով (խնայելով) ապրեցէք...:

— Հայ, սե-մութ ըլլի էս ապրուստը, որ մենք կապրինք... կնոջ նետը կարծես մարդու վէրքին դիպաւ: Ոչ մի մարդու յանդիմանանք ու կշտամբանք այնքան ազդու, խոր չեն ծակել մարդու սիրտը, որքան կնոջ մի խօսքը: «Գատարկ փորով քնիլ կըլլի...» հեշտ էր լսել կնոջ բերանից... Արիւնլուայ վագրի նման խոր մոնչաց խեղճ Գալօն ու տան սեան հետ կանգնած տեղը դիք մնաց...:

— Ափարս (հայրիկս) եկաւ, ապա ջան (մայրիկ) հաց չը բերեց... մինդրի տակից քաշքշելով կանչում էին փոքրերը...:

— Բա, էլ ինչի մօլըար, քընը երկու հացըմ փոխ բեր դրկիցներէն, էս տղոցը ձէնը կտրենք, աշենք Աստուած ինչ կուտայ...:

— «Աչէնք Աստուած ինչ կուտայ...», դէ, տուել է, էլ ինչ կուզես... դարտ ու ցաւ, ցաւ ու դարտ... էրթամ, էրթամ, դրկիցներէն փոխ բերեմ...: Մեծ շիբուխը

կամաց կամաց վառելով, պատասխանեց
խեղճ Գալօն:

Դրկիցենց տունը շատ մօտ էր, Գա-
լօննց տանը պատկից, բայց Գալօն շատ ու-
շացաւ. կէս ժամից յետոյ հազիւ դարձաւ,
կռան տակին մի քանի հաց, գարի, սև հաց
խտտած: Խեղճ ու անճար աղքատին էլի
խեղճի հացը պիտի կշտացնէր. հարուստ
աղի հացն էլ մարդու կշտացնէ... Մանր
ու խոշոր մանուկները մինդրի տակից վրժ-
վժալով դուրս թռան ու մէջ առան կտոր
փայտէ փոքրիկ խոնչան (սեղան), որի վրայ
կաւէ քրէղանով պըպզել էր աղքատի սև
օրուան ընկեր աղի ղըմին (կանաչ):

— Ապա, էսօր պասէ...:

— Պաս է, բալաս, պաս, կերէք քնենք. . .
Խեղճ մանկիկներ, ասա ուտիս տեսել էիք,
որ պասն էիք հարցնում...: Գալօն իսկի
ձեռ չը տուեց բերած հացին, թէև ինքն
էր ամենից շուտ հաց ուզել: Նա լուռ նըս-
տած, թինկը ամուր սեանը տուած, բոլոր
ուժով հաստ շիբուխի կծու ծուխը ներս էր
քաշում ու սրտի խիստ փոթորկից շրթուն-
քները կրծելով, քուլա-քուլա դուրս թող-
նում: Ծուխը լաւ էր, բայց այդ ծուխը

կարծես քիչ էր Գալօի մեծ վէրքի համար.
Նա դեռ շատ մեծ ծուխ ու բոցի էր սպա-
սում...: Բոլորն էլ լուռ, հանգիստ էին.
ձէն-ձուզ չը կար, ամենքն իրանց գործով
բռնված աշխատում են: Մանուկները հա-
րամու պէս անխօս ու մունջ, գարի հացն
ու աղի ղմին բըթում արած, ներս են կտ-
խում բերանները՝ ինչքան տեղ կայ. նազ-
լուն էլ լուռ, մերթ մի պատառ վերցնելով,
ծոյլ, ակամայ ծամժըմում էր, մերթ թէչի-
կը կամաց-կամաց պըտտում, որ իր աղի,
Մարտիրոս աղի թոռներին գուլբացու թել
հասցնէ: Միայն քամին հռհռոցով, քրքչոցով
խեղճ աղքատի կեանքն է ծաղրում և ուժ
զիտէ դեռ ինչքան վատ, դաժան օրեր դու-
շակում...:

Ցանկարծ գիւղում ինչ որ «հաւար»,
հարայ-հրոցի ձայն ընկաւ, մարդիկ վազում,
վազվզում են, իրար կանչում, «հաւար»
կանչում...: Գալօն տեղից կայծակի պէս
վեր թռաւ. մի շարախենդ, սրտանց ժպիտ
դէմքին զրոշմվեց այդ պահուն:

— Քա էդ ինչ է, ինչ դալմաղալ, հայ
հաւար է...:

—2նս իմանայ, կրակը, կրակը, կը գոռան... կալը եանդուն (հրդէհ) է ընկել... հացը վառաւ, թայան (դէզ) վառաւ... ու գոռալով, դուրս թռաւ:

—Կրակը, կրակը, հասիք, հաւար, եանդուն է... նոր Գալօի յետքից լսվեց հաւարը: Եանդուն է... Ի՛նչ հեշտ բան է բերնով ասել «եանդուն» է. «եանդուն» դիւզում, այն էլ աշնան այդ պահուն, երբ կալերում խոտ ու օրնից ասեղ գցելու տեղ կը կայ...:

Ծուխն առել էր Գ. դիւզը: Դռնիցը ոտք դուրս դնողը Մարտիրոս աղի կալն էր վագում, որ մուխի ու բոցերի մէջ կորել էր: Քսան սայլնոց բրնձի պէս գարու դէզը, որ այդ օրը միայն կրել, դիզել էին խեղճ Գալօի արտերից, դժոխքի պէս վառվում էր...: Քամին էլ դեռ շնվշնգում էր, ալ-բոցերի հետ հռհռում, համբուրվում. սև մուժի մէջ շերտ բոցերը մահագուժ, չարագուշակ կերտնի պէս փլփլում են: Ամբողջ դիւզը գործի էր, որն եղանով, որը թիով, որը բահով, որն էլ ջրի բուղաներով աշխատում: Գալօն էլ էր նբանց մէջ. նոյն ժպի-

տը երեսին կրկնում էր օրանը, բայց ո՛վ գիտէ հանգցնելու, թէ աւելի թէժ կրակը գորխըրցնելու նպատակով...:

Ծուխ ու բոցի դժոխքի մէջ Գալօն ընկեր շատ ունէր, շատի դէմքին նոյն ինքնագոհ «սրտի ժպիտն» էր նշմարվում...: Սլ կրակը քանի գնում տարածվում էր ու ահուելի ճարճատիւնը, ճկճկոցը քամու 'դաժան վռոցի հետ խառնում կանանց, մասուկների ճիշ-լացին...: Կրակը սրբեց, լափեց տարաւ, մոխրակոյտի վերածեց Մարտիրոս աղի ամբողջ կալն ու խոտերի էլ կէսը այրել, պրծել էր, երբ հազիւ հազ կարողացան ամբողջ դիւզով մի կերպ մարել, հանգցնել:

Կէս գիշերը անց էր արդէն, երբ ամբոխը տուն ցրվեց, Գալօն էլ ուշ տուն գնաց ու կեանքի մէջ պէթ մի գիշեր, թէպէտ քաղցած բայց հովացած հանգիստ սրտով քուն մտաւ: Կրակը մարեց... և իր հետը քանի, քանի Գալօի պէս վառված, դադված բոց սրտերի կրակ մարեց...: Բայց էն կալից, Մարտիրոս աղի մեծ կալից դեռ գալիս է խօտ ու օրանի խանձա-

հոտը... , որ իր արած «մեծ գործերի,
լաւ գործերի» խունկ—կնդրուկն է ար-
ժանի...



ՀՀ կապիտալիզմի գրադարան



№ 0280226

ՀՀ Ազգային գրադարան



NL0360225

51871

